

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

## ՈԱԶՄԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու*

Հոդվածը ստացվել է՝ 04.03.2021, գրախոսվել է՝ 08.04.2021

### Ներածություն

Ադամ Սմիթը գտնում էր, որ տնտեսությանը պետք է թույլ տալ գործել ինքնուրույն, կառավարության կողմից առանց որևէ միջամտության՝ օգտագործելով ազատ շուկայի ուժերը: Տնտեսությունը կարող է հարստություն ստեղծել և բարձրացնել արդյունավետությունը շուկայական ուժերի կամ, ինչպես ընդունված է տնտեսագիտության մեջ, *«անտեսանելի ձեռքի»* միջոցով: *«Անտեսանելի ձեռքը»* բնական երևույթ է, որը շուկան մղում է առաջ մրցակցության սուղ միջոցների պայմաններում: Սմիթը համարում էր, որ մարդկային ցանկությունները անսահմանափակ են, բայց դրանց բավարարող միջոցները՝ սահմանափակ, և մարդիկ կարող են մրցել միմյանց հետ, իսկ մրցունակության առկայությունն անհրաժեշտ պայման է ազատ շուկայի համար: Կառավարության միջամտության դեպքում մարդիկ կդադարեն մրցակցել, որն իր հերթին կբերի գների բարձրացման և որակի անկման: Նա պնդում էր, որ կառավարության ցանկացած միջամտություն թուլացնում է տնտեսությունը: Կառավարության միջամտությունը հանրային բարիքների՝ ճանապարհների և կամուրջների կամ ենթակառուցվածքների, տարբեր տարիքի մարդկանց համար կրթության, առողջապահության և բժշկական օգնության ապահովման գործում կարող է օգտակար լինել ապրուստ վաստակելու համար, որը նաև կարող է արդյունավետ լինել: Բայց դա չի նշանակում, որ կառավարությունը պետք է գործի որպես ֆիրմա, որպեսզի առավելագույնի հասցնի իր շահույթը: Նա ցանկանում էր, որ հասարակության բոլոր խավերը, նույնիսկ ամենաաղքատ, օգտվեն ազատ շուկայական համակարգից: Կառավարությունն ու պետությունը կարող են կարևոր դեր ունենալ պետական դպրոցների կառավարման գործում, քանի որ շատ երիտասարդ ուսանողներ գումար չունեն մասնավոր համալսարաններում սովորելու համար, բայց շատ կարևոր է իմանալ ուսանողի ունակություններն ու տաղանդները և դրանցում ներդրումներ կատարել և՛ որպես մարդու, և՛ որպես աշխատուժի: Սմիթը գտնում էր, որ կառավարությունը պետք է հանգիստ թողնի տնտեսությանը և չմիջամտի ազատ շուկայի ու ազատ առևտրի բնական ազատությանը<sup>1</sup>: Կողմ չէր արտադրության և առևտրի ոլորտում որոշ արտադրողների ու առևտրականների կառավարության կողմից հատուկ արտոնություններ տրամադրելուն և կարծում էր, որ դա կստեղծի մի քանի հսկայական մենաշնորհներ, որոնք թշնամի կլինեն ազատ շուկային

<sup>1</sup> Adam Smith, The Wealth of Nations, 1776, <http://civilngo.com/adam-smith-1723-1790/>

և կոչնչացնեն շուկայական ուժերը, ինչպես նաև կբերեն շուկայի ձախողմանը: Հասկանալի է, որ մենաշնորհի դեպքում գինը և աշխատավարձն ավելի բարձր են, քան ազատ շուկայում դրանց բնական դրույքաչափերը, և այս տարբերության գոյության պատճառով տնտեսությունը չի աշխատում պատշաճ ձևով: Նրա գաղափարները դարձան տնտեսագիտության դասական դպրոցի հիմքը, և նա էլ պատմության մեջ մտավ որպես այսպես կոչված **«տնտեսագիտության հայր»**: Նրա **«անտեսանելի ձեռքն»** այսօր էլ շարունակում է հզոր ուժ մնալ, իսկ նրա ենթադրած **«ազատ շուկան»**, չնայած դեռ լիովին չհասկացված, գուցե ավելի շատ բան է արել համաշխարհային կենսամակարդակի բարձրացման համար, քան պատմության ցանկացած այլ առանձին գաղափար:

### **Կիրառված մեթոդներ**

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսվարող սուբյեկտների գործունեության դրական միտումները հասկանալու համար շատ կարևոր է հետևել շուկայավարման կանոններին, ըստ որոնց՝ համապատասխան գործիքակազմերի կիրառումներով տնտեսական արդյունքները կարող են ձգտել առավելագույնի: Ընդ որում՝ գործիքակազմերի համապատասխան ճիշտ օգտագործումը միկրոմակարդակում տալիս է դրական էֆեկտներ, որոնք էլ, ի վերջո, տնտեսական աճի նախահիմքեր են ստեղծում: Վերը նշվածը պատկերավոր դարձնելու նպատակով ստորև անդրադառնանք շուկայավարման հիմնական գործիքներին, որոնց համակողմանի օգտագործմամբ էլ տնտեսական օգուտներն ավելանում են<sup>1</sup>:

#### ***Մարքեթինգ: Այս բնագավառում առանձնացվում են հետևյալ չափանիշները.***

- **ապրանքների և ծառայությունների բազմազանությունը:** Կազմակերպությունը շահագրգռված է անվանացանկի ընդլայնմամբ, որը կապահովի օպտիմալ շահութաբերություն:
- **Շուկայի մասնաբաժինը և մրցունակությունը:** Կազմակերպության կարևորագույն խնդիրը շուկայում նրա տեսակարար կշռի ավելացումն է: Անհրաժեշտ է սահմանել կազմակերպության՝ շուկայում ունեցած մասնաբաժնի փոփոխության միտումները մրցակիցների համեմատությամբ:
- **Մարդկային ռեսուրսներ:** Անհրաժեշտ է կադրային ներուժի կառավարման արդյունավետության և աշխատողների շահադրդման համակարգի լիարժեք վերլուծություն՝ համաձայն կազմակերպության ռազմավարական նպատակների:
- **Հաճախորդների սպասարկում նախքան վաճառքը և վաճառքից հետո:** Արդյունավետ սպասարկումը հնարավորություն է տալիս վաճառելու ավելի շատ ապրանք, պահպանելու չեզոքություն հաճախորդների հանդեպ, սահմանելու բարձր գներ՝ ի հաշիվ սպասարկման բարձր որակի:

---

<sup>1</sup> Шаповалов В. А., «Управление маркетингом и маркетинговый анализ», Ростов-на-Дону, 2008, с. 35.

- **Արդյունավետ դիստրիբուցիա (մատակարարում), գովազդ և ապրանքների առաջխաղացում:** Կառավարման կարևորագույն գործառնություններից են իրացման գովազդի և ապրանքների առաջխաղացման համախմբումը և արդյունավետությունը:
- **Շուկայական ժողովրդագրական վիճակագրություն:** Վերլուծությամբ հայտնի են դառնում շուկայի և սպառողների շահերի հետ կապված փոփոխությունների պատճառները:
- **Կազմակերպության բրենդ (առաջնորդի համբավ):** Այն բնութագրվում է ոչ միայն արտադրանքի և ծառայությունների ճանաչվածությամբ, այլև որակի, կառավարման մակարդակի չափանիշներով (այդ թվում՝ կորպորատիվ), պատմությամբ և հեղինակությամբ, սպասարկման կուլտուրայով:

Անշուշտ, կազմակերպության կապիտալացման մակարդակի բարձրացման կարևոր ցուցանիշ է կազմակերպության տնտեսական աճը: Յուրաքանչյուր ռազմավարության իրացման հնարավոր արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել ներտնտեսական պլանավորման միջոցով՝ բնութագրելով վճարունակությունը, գործունեության արդյունքները, ձեռնարկության գույքային և ֆինանսական վիճակը պլանավորվող ժամանակահատվածի վերջում: Յուրաքանչյուր ռազմավարական այլընտրանքի գծով պետք է կազմվեն հետևյալ բյուջեները (նախահաշիվները)։

- **օգուտներ և վնասներ:** Գալիք հաշվետվության նախագիծը օգուտների և վնասների վերաբերյալ պլանավորվող ժամանակամիջոցի համար,
- **պլանային հաշվեկշիռ:** Հաշվետու ժամանակամիջոցի հաշվեկշռի նախագիծը պլանավորվող ժամանակամիջոցի վերջում,
- **դրամական միջոցների նախահաշիվ:** Դրամարկղային վճարումների և մուտքերի պլանը մնացորդների դուրսբերումով՝ ըստ պլանավորվող ժամանակամիջոցի ամիսների և տվյալների. դրամական միջոցների անբավարարության դեպքում կարգավորվում է վարկերի հաշվին, իսկ մնացորդների ավելցուկի առկայության ժամանակ՝ դեպոզիտների հաշվին<sup>1</sup>:

Վերը ներկայացված շուկայավարման գործիքների օգտագործմամբ տնտեսվարող սուբյեկտներն իրենց ստացվելիք շահույթը կարող են հասցնել առավելագույնի, սակայն գործունեության մեծացման արդյունքում, շուկայում զբաղեցնելով գերիշխող դիրք, նրանք կառաջացնեն ապրանքային անհավասարակշռումներ՝ խոչընդոտելով արդարացի գնագոյացմանը: Հավելենք, որ XXI դ. աշխարհի գրեթե բոլոր երկրներում գերիշխում է շուկայական տնտեսական համակարգն իր օրենքներով, սակայն, տարբեր գործընթացներով պայմանավորված, ինքնագործ տնտեսության մեջ պետական գործիքակազմերով կատարվում է միջամտություն, որն արդեն արտապատկերում է խառը տնտեսության մոդելը, հետևապես պետությունը, տնտեսական կյանքին անընդհատ միջամտելուց զատ, պետք է ծավալի նաև տնտեսական գործունեություն՝ հանձն առնելով սոցիալա-

<sup>1</sup> А. И. Алексеева, Ю. В. Васильев, А. В. Малеева, Л. И. Ушвицкий, «Комплексный экономический анализ хозяйственной деятельности», Москва, 2006, с. 82.

կան պատասխանատվություն, ինչի արդյունքում էլ արդարացի գնագոյացման հիմքեր կստեղծվեն:

Տնտեսության զարգացմանը նպաստող տեսությունները հազարավոր են, որոնց հեղինակները մշտապես հերքում կամ հաստատում են միմյանց՝ ընդգծելով սեփական անձի հեղինակությունը, սակայն այս ամենին բացառիկ հիմնավորում է տվել տնտեսագիտության նեոդասական տեսության հիմնադիր Ալֆրեդ Մարշալը. «Երբ նոր հետազոտությունները ժամանակի ընթացքում գտնում են իրենց տեղը, իսկ նրանց քննադատական արությունը վերանում է, պարզ է դառնում, որ իրականում դրանք ամենևին էլ չեն խախտում գիտության զարգացման հաջորդականությունը: Նոր տեսություններն ընդամենը լրացնում են հինը, ընդլայնում ու զարգացնում, երբեմն ճշգրտում, հաճախ տալիս այլ երանգավորում, նորովի կատարում շեշտադրումներ և հազվադեպ հերքում են դրանք»<sup>1</sup>:


### **Հողվածի նպատակադրումը**

Հաշվի առնելով, որ ցանկացած տնտեսական գործունեության հիմնական ուղենիշը շահույթ հետապնդելն է, այդ գործունեությունը տնտեսվարող սուբյեկտների կողմից պետք է նշագծվի այնպես, որ արտադրատեսակների, ինչպես նաև մատուցվող ծառայությունների գները շուկայում լինեն հավասարակշռված, ողջամիտ, առաջարկով և պահանջարկով գնագոյացված: Տնտեսագիտական տարբեր հայացքների և ուսմունքների տեր հեղինակները այս առումով տարբեր պնդումներ ունեն, որովհետև նրանք հիմնականում հաշվի են առնում գնագոյացման այն մոդելը, որով գների կայունությունը պայմանավորվում է առանց պետական միջամտության: Ադամ Սմիթի տնտեսագիտական ուսմունքը մինչ օրս էլ մնում է արդիական, սակայն այն չպետք է դիտել խիստ դոգմատիկ, քանի որ մեր օրերում ապրանքների գների փոքր-ինչ շեղումները ուղեկցվում են պետական միջամտությամբ, որի հասցեատերը մեր երկրում արդեն երկար տարիներ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն է, որը և տնտեսական ապրանքների, մատուցվող ծառայությունների արդարացի և հավասարակշռված գնագոյացման միակ ապավենն է: Վերը նշված մոդելի երերուն լինելը հիմք է տալիս պնդելու, որ մեր երկրում կարելի է ստեղծել **Ազգային տնտեսական համակարգի** մի մոդել, որտեղ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման սեփականատեր կարող է դառնալ հենց Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ զերծ մնալով շուկայում գների անընդհատ հավասարակշռումներից՝ մասամբ հանդես գալով որպես մրցակցային կողմ:

Ստորև ներկայացված գծապատկեր 1-ում փաստական տվյալներ են բերվել պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակի վերաբերյալ.

---

<sup>1</sup> Маршалл А., «Принципы политической экономии», т. 1, Москва, 1983, с. 45.



**Գծապատկեր 1.** Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը Հայաստանի Հանրապետությունում (1998-2020 թթ.)<sup>1</sup>

Բերված տվյալները փաստում են, որ 1998-2020 թթ. տեղի է ունեցել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակի աստիճանական նվազում: 2020-ին 1998 թ. համեմատությամբ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը նվազել է 704-ով և կազմել 150: Վերջինս արդյունք է ինչպես ընկերությունների մասնավորեցման, այնպես էլ նրանց սնանկացման և լուծարման: Ինչպես հայտնի է, լուծարվող ընկերությունների մի մասը մասնավորեցման ներկայացված և գնորդների մոտ հետաքրքրություն չառաջացրած, մյուս մասն էլ չաշխատող, ֆինանսատնտեսական վատ ցուցանիշներ ունեցող և գործունեության հեռանկարներ չունեցող ընկերություններ են: Հետևապես տվյալ հիմնախնդիրներին պետք է տրվեն համապատասխան լուծումներ, ըստ այդմ էլ ստորև անդրադառնանք հնարավոր այն գործիքների կիրառմանը, որի արդյունքում անհրաժեշտություն կառաջանա արդյունավետ համագործակցել ՀՀ կառավարության հետ, այլ պարագաներում՝ առաջարկվում է պետությանը իր գործունեությունը ծավալել միայնակ:

### **Հողվածի գիտական արդյունքը**

ՀՀ կառավարությունը, ներգրավվելով տնտեսական գործընթացներում, կարող է ստեղծել նաև **ազգային թիվ 1 բրենդով** մատակարարվող ապրանքներ և մատուցվող ծառայություններ, ինչը ապրանքային շուկայում կնպաստի գների հավասարակշռմանը: Ընդ որում՝ **Ազգային տնտեսական համակարգ** անհրաժեշտ է ներդնել ոչ միայն մայրաքաղաք Երևանում, այլև հանրապետության բոլոր մարզերում առանց բացառության: Հավելենք, որ դիտարկվող համակարգի կիրարկելիությունը հիմնավորված է ազգային տնտեսական գործունեության համապատասխան տարատեսակների միջոցով, որոնք և կարելի է դարձնել գործ:

<sup>1</sup> ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեի 1998-2020 թթ. գործունեության հաշվետվություն, <https://www.stateproperty.am/page/48/p/?year=2019>:

## Առաջարկություններ

• ՀՀ պետական, ինչպես նաև մասնավոր հողերի շահագործմամբ մշակել հացահատիկային կուլտուրաներ, որոնք մեր երկրում կնպաստեն պարենային անվտանգությանը և ինքնաբավ տնտեսության ստեղծմանը:

• Խելացի գումերի հիմնում, որը որակյալ մսամթերքների տեսականի կառաջարկի ոչ միայն մեր համերկրացիներին, այլև դրանք կարտահանվեն այլ երկրներ:

• Հայկական ապրանքանիշերով խմելու ջրի արտադրություն, այդ թվում՝ հանքային, որոնք պետք է ներկայացված լինեն ազգային դրոշմապիտակներով և հայաստանյան տեսարժան վայրերի նկարագարդումներով, որով ոչ միայն կընդգծվի մեր երկրի հեղինակությունն արտերկրներում, այլև կարող են ավելանալ զբոսաշրջային հոսքերը դեպի Հայաստանի Հանրապետություն:

• Պետական բենզալցակայանների և գազալցակայանների հիմնում՝ ներգրավելով մեր հարևան երկրների, մասնավորապես՝ Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսական ներուժը և հարուստ բնական ռեսուրսները:

• Ազգային ապրանքանիշերով ըմպելի լիմոնադների արտադրություն:

• Պետական գույքի արդյունավետ շահագործում, որը կարող է առաջացնել տնտեսական օգուտներ. խոսքը վերաբերում է ցանկացած գույքատեսակի, որի օգտագործումը վաճառելուց առավել ձեռնտու կարող է դիտվել:

• Սևանա լճի շրջակայքի պետական հողամասերը դարձնել ընտանեկան հանգստի հանրային գոտիներ, եթե այդպիսիք դեռ կան, այլ դեպքերում համագործակցել տվյալ տարածքների սեփականատերերի հետ՝ դրանով իսկ ակնկալելով մեր համերկրացիների հանգստի պայմանների ստեղծում և զբոսաշրջային հոսքերի գեներացում հենց Գեղարքունիքի մարզում:

## Վերջաբան

Այսպիսով, գալիս ենք այն եզրահանգման, որ Հայաստանի Հանրապետությունում կարելի է ստեղծել մի այնպիսի **Ազգային տնտեսական համակարգ**, որտեղ և իր ուրույն մասնակցությունը կարող է ունենալ հենց ՀՀ կառավարությունը, քանի որ, հանրապետությունով մեկ ամեն տարի այս կամ այն տնտեսական ծրագրի իրականացմանը սուբսիդիաներ տրամադրելուց զատ, այն կարող է դառնալ նաև տնտեսավարման ակտիվ կողմ՝ այդպիսով ուղղակիորեն մասնակցելով արտադրված ապրանքների և մատուցվող ծառայությունների գնագոյացման հավասարակշռված և արդարացի լինելու գործընթացին: **Պետություն և մասնավոր հատված** համագործակցությունը միմիայն ընդլայնելու է տնտեսական գործունեության տարածքը, որի արդյունքները երկար իրենց սպասել չեն տա: Արդյունքում կստեղծվի **ազգային թիվ 1 բրենդը**, որը և կդառնա այլ երկրների հետ տնտեսական համագործակցության մի նոր կամուրջ, որի ակնկալիքով էլ ձևավորվել և զարգացվել է տնտեսագիտական միտքը:

## Հոդվածի գիտական նորույթը

Հոդվածում առաջարկվում է ՀՀ-ում ներդնել հեղինակի կողմից մշակված **Ազգային տնտեսական համակարգի** մոդել, որի գործարկման արդյունքում

երկիրը կունենա ազգային թիվ 1 բրենդով մատակարարվող որակյալ ապրանքների և մատուցվող ծառայությունների մի համախումբ: Դրանք կբավարարեն ներքին պահանջարկը, կնպաստեն գների կայունությանը, պարենային անվտանգությանը և կապահովեն ապրանքների արտահանման դաշտը՝ ՀՀ կառավարությանը տնտեսապես կամրջելով աշխարհի տարբեր երկրների հետ:

## Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեի 1998-2020 թթ. գործունեության հաշվետվություն, <https://www.stateproperty.am/page/48/p/?year=2019>, НН [Petakan guyki karravarman komitei 1998-2020 tt. gortsuneutyashvetvutyun, <https://www.stateproperty.am/page/48/p/?year=2019>]
2. Алексеева А. И., Васильев Ю. В., Малеева А. В., Ушвицкий Л. И., «Комплексный экономический анализ хозяйственной деятельности», Москва, 2006, с. 82, [А. И. Alekseeva, Ju. V. Vasil'ev, A. V. Maleeva, L. I. Ushvickij, «Kompleksnyj jekonomicheskij analiz hozjajstvennoj dejatel'nosti», Moskva, 2006, s. 82.]
3. Маршалл А., «Принципы политической экономии», т. 1, Москва, 1983, с. 45, [Marshall A., «Principy politicheskoy jekonomii», t. 1. Moskva, 1983, s. 45]
4. Шаповалов В. А., «Управление маркетингом и маркетинговый анализ», Ростов-на-Дону, 2008, с. 35, [Shapovalov V. A., «Upravlenie marketingom i marketingovyj analiz», Rostov-na-Donu, 2008, s. 35]
5. Adam Smith, The Wealth of Nations, 1776, <http://civilngo.com/adam-smith-1723-1790/>,

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

### ՌԱԶՄԻԿ ԻՍԱՀԱԿՑԱՆ

*տնտեսագիտության թեկնածու*

**Համառոտագիր:** Հոդվածում ներկայացվել են ՀՀ-ում շուկայական տնտեսության զարգացման հնարավորությունները՝ պետական միջամտության համատեքստում: Շեշտվել են շուկայավարման այն գործիքները, որոնց գործարկմամբ տնտեսավարող սուբյեկտները կստանան առավելագույն տնտեսական օգուտներ: Ընդգծվել են շուկայական տնտեսական գործունեության պայմաններում օգուտների և վնասների համամասնությունները՝ ցույց տալով ապագայի անելիքները: Առաջարկվել է ՀՀ կառավարությանը ներգրավվել տնտեսական պրոցեսներին՝ որպես տնտեսավարող սուբյեկտի՝ առաջադրելով արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների փաստական օրինակները: Հղում է կատարվել նաև տնտեսագիտության հայր համարվող Ադամ Սմիթի տնտեսագիտական ուսմունքին, ըստ որի՝ տնտեսական պրոցեսների վերելքներն ու անկումները ի վերջո կարող են հավասարակշռվել առանց պետական միջամտության: Արտա-

դրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գնագոյացման անընդ-  
հատ հավասարակշռումներից և կարգավորումներից խուսափելու համար էլ  
ունտեսվարման ակտիվ կողմի նախաձեռնությունը տրվել է հենց պետությանը:  
Պետություն-մասնավոր հատված համագործակցությունը մեր երկրում անշուշտ  
կընդլայնի տնտեսական տարածքը, կավելանան տնտեսական օգուտները, որն  
էլ կուղեկցվի ազգային բրենդով մատակարարվող ապրանքներով և մատուցվող  
ծառայություններով: Հարկ է փաստել, որ դիտարկվող հողվածում ներկայացված  
**Ազգային տնտեսական համակարգի** ստեղծումը և գործարկումը Հայաստանի  
Հանրապետության կառավարությանն այսօր պետք է ավելի, քան երբևէ, և այդ  
գաղափարի իրագործմամբ կստեղծվի նաև այլ երկրների հետ տնտեսական  
համագործակցության ևս մեկ հնարավորություն:

**Գիտական նորույթը:** Կատարված ուսումնասիրությունների և վերլու-  
ծությունների արդյունքում հողվածագիրը ձևակերպել է ստորև բերվող գիտա-  
կան նորույթը:

ՀՀ կառավարությունը, ներգրավվելով տնտեսական գործընթացներում, կա-  
րող է ստեղծել նաև «ազգային թիվ 1 բրենդ»-ով մատակարարվող ապրանքներ և  
մատուցվող ծառայություններ, որը ապրանքային շուկայում կնպաստի գների  
հավասարակշռմանը: Ընդ որում, «Ազգային տնտեսական համակարգ» անհրա-  
ժեշտ է ներդնել ոչ միայն մայրաքաղաք Երևանում, այլև հանրապետության բո-  
լոր մարզերում՝ առանց բացառության:

**Բանալի բառեր.** շուկայական տնտեսություն, զարգացում, պետական միջամտու-  
թյուն, տնտեսական ազատություն, մրցակցություն, մենաշնորհներ,  
գնագոյացում, ազգային տնտեսական համակարգ:

## РОЛЬ ГОСУДАРСТВА В РАЗВИТИИ РЫНОЧНОЙ ЭКОНОМИКИ (НА ПРИМЕРЕ РА)

**РАЗМИК ИСААКЯН**

*Кандидат экономических наук*

**Аннотация.** В статье представлены возможности развития рыночной экономи-  
ки в Республике Армения в контексте государственного вмешательства. Представ-  
лены маркетинговые инструменты, от эксплуатации которых хозяйствующие  
субъекты получают максимальную экономическую выгоду. Подчеркиваются соот-  
ношения прибылей и убытков в условиях рыночной экономической деятель-  
ности, демонстрируя задачи, предусмотренные на будущее. Предложено вовлечь  
правительство Республики Армения в экономические процессы в качестве хо-  
зяйствующего субъекта, представляя фактические примеры производимых товаров  
и оказываемых услуг. Представлена также экономическая теория Адама Смита,  
считающегося отцом современной экономики, согласно которой взлеты и падения  
экономических процессов могут в конечном итоге уравновеситься без вмеша-

тельства государства. Во избежание постоянных балансировок и корректировок ценообразования производимых товаров и оказываемых услуг, инициатива активной стороны хозяйствования была отдана именно государству. Государственно-частное партнерство несомненно расширит экономическое пространство в нашей стране, увеличатся экономические выгоды, что будет сопровождаться товарами и услугами, поставляемыми под национальным брендом. Следует отметить, что правительство Республики Армения сегодня как никогда нуждается в создании и применении **Национальной экономической системы**, представленной в рассматриваемой в статье, и реализация этой идеи создаст еще одну возможность для экономического сотрудничества с другими странами.

**Научная новизна.** В результате проведенных исследований и анализов автором статьи была сформулирована нижеследующая научная новизна.

Правительство Республики Армения, будучи вовлечено в экономические процессы, может внедрить **Национальную экономическую систему** и создать товары и услуги, поставляемые **под национальным брендом № 1**, что поспособствует уравниванию цен на сырьевом рынке. При этом, **Национальную экономическую систему** необходимо внедрить не только в столице Ереване, но и во всех регионах Армении без исключения.

**Ключевые слова:** рыночная экономика, развитие, государственное вмешательство, экономическая свобода, конкуренция, монополии, ценообразование, национальная экономическая система.

## THE ROLE OF THE STATE IN MARKET ECONOMY DEVELOPMENT (CASE OF THE RA)

RAZMIK ISAHAKYAN

*Ph.D. in Economics*

**Abstract.** The opportunities for the development of market economy in the Republic of Armenia have been presented in the article in the context of state intervention. The marketing tools by application of which economic entities will gain the maximum economic benefits were highlighted. Proportions of gains and losses under the conditions of market economic activities have been emphasized, showing the actions to undertake in the future. It is proposed to involve Armenian government in economic processes as an economic entity, presenting factual examples of produced goods and provided services. The Economic theory by Adam Smith, who is considered the father of modern economics, has also been cited, according to which the ups and downs of economic processes can eventually be balanced without state intervention. Aiming to avoid constant balancing and adjustment of pricing of produced goods and provided services, the initiative of the active economic party has given to the state. Public-private partnership will undoubtedly expand the economic space in our country,

economic benefits will increase, which will be accompanied by the supply of goods and services under the national brand. It should be stated that the Armenian government needs establishment and implementation of **National Economic System** today more than ever and the realization of this idea will create another opportunity for economic cooperation with other countries.

**Scientific novelty.** As a result of conducted researches and analyses the author of the article formulated the below scientific novelty.

The government of the Republic of Armenia, by being involved in economic processes, can create goods and services supplied under **national brand No. 1**, which will contribute to price balancing in the commodity market. Moreover, **National Economic System** needs to be introduced not only in capital Yerevan, but also in all regions of Armenia, without exception.

**Keywords:** market economy, development, state intervention, economic freedom, competition, monopolies, pricing, national economic system.